ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 6 սեպտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Հենրիկ Պապոյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Հենրիկ Պապոյանը 2011թ. օգոստոսի 18-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողը գտնում է, որ նշված օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի եւ 175-րդ հոդվածի իրավակարգավորման հետ անհամապատասխանության պայմաններում եւ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակության շրջանակներում, անհրաժեշտ է ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումով գործի քննությունն ամբողջությամբ ենթակա է մերժման, քանի որ առկա են դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված եւ օրենքով սահմանված ներքոհիշյալ հիմքերը:

1. ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Մատնանշված հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը նախատեսում է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության հստակ պայմանները: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարան դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ վիճարկվող օրենքի դրույթը կիրառվել է գործը լուծող **վերջնական դատական ակտով:**

Դիմողի կողմից դիմումի ընդունելիության վերը նշված պայմանը պահպանված չէ, քանի որ վերջնական դատական ակտով, այն է՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 08.12.2010թ. որոշմամբ վիճարկվող օրենքի դրույթը կիրառված չէ /ՀՀ վճռաբեկ դատարանի 16.02.2011թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է/:

2. Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերին համապատասխան՝ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է՝ այնքանով, որքանով դիմողը բավարար եւ անհրաժեշտ իրավաբանական փաստարկներով ու եզրահանգումներով պատշաճ կերպով չի հիմնավորել սահմանադրահիրավական վեճի առարկա հանդիսացող իրավադրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու պարագան, ավելին՝ դիմողի հիմնավորումները կրում են բացառապես ձեւական բնույթ եւ ուղղված են այդ դրույթի կիրառման իրավաչափության հարցին: Դիմողը ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ իրավանորմի սահմանադրականությունը՝ ըստ էության բարձրացնում է նշված դրույթի կիրառման իրավաչափության հարց: Փաստորեն, դիմողը փորձել է դատական ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավանորմի սահմանադրականության խնդրին: Անհրաժեշտ է արձանագրել նաեւ, որ դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել վիճարկվող օրինադրույթի եւ իր իրավունքների խախտման փաստի միջեւ առկա պատճառահետեւանքային կապը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Հենրիկ Պապոյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 սեպտեմբերի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/2-9